Հ-Ռ-3229 *13 նոյեմբերի, 2025թ.*

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ
Վահագն Միսակի Հովակիմյանին
hovakimyanV@elections.am cec@elections.am

«Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի լիազոր ներկայացուցիչ
Դանիել Արայի Իոաննիսյանից
info@uic.am rousanna.avaguimian@gmail.com
+374 55 188 806
0038 Երևան, Աբելյան 6/1, 409Ա

Դ Ի Մ Ում

Հարգարժա՛ն պարոն Հովակիմյան,

«Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի (անդամ կազմակերպությունների) անունից՝ Ձեզ եմ դիմում հետևյալ հարցի առնչությամբ:

«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱԹՈՅԱՆ» հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավար Արման Թաթոյանի կողմից արված բազմաթիվ հայտարարություններում արտահայտվում է կանխակալ դիրքորոշում և նախապատվելի վերաբերմունք քաղաքական ուժերի հասցեին, այդ թվում՝ Վաղարշապատի ընտրություններին մասնակցող ուժերի վերաբերյալ: Այսպես՝

Նոյեմբերի 12

«Փաշինյանը, ՔՊ-ականները իրար հերթ չտալով խոսում են սրա մասին, իրականում սա ամբողջ Հայաստանը շրջափակման մեջ գցելու, մեր սահմանները բզկտելու ծրագիր է:»

https://www.facebook.com/reel/2616872785346364

Վերահրապարակվել է նաև «ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱԹՈՅԱՆ» հիմնադրամի «Facebook» սոցիալական ցանցի էջում

https://www.facebook.com/share/v/1D3VK6J1n9/

Նոյեմբերի 7

«Չաշխատող ժամացույցը օրը 2 անգամ ճիշտ ժամ է ցույց տալիս. նույն տրամաբանությամբ՝ Փաշինյանն ու ՔՊ-ն, իմ կարծիքով, օգոստոսի 8-ից հետո օրացույց չեն շրջում, որ ստիպված չլինեն ընդունել իրենց ձախողումները:...»

https://www.facebook.com/reel/772529669174189

Վերահրապարակվել է նաև «ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱԹՈՅԱՆ» հիմնադրամի «Facebook» սոցիալական ցանցի էջում

https://www.facebook.com/share/p/17mcHUwzqa/

Հոկտեմբերի 25

«Հայաստանի տարածքների օկուպացիայի, Արցախի հայաթափման ու կորստի հարցերը, բազում ներքին ու արտաքին խնդիրներ մոռացության տալու համար ու հանուն նրա, որ իրեն դավաճան չասեն Վարչապետի պաշտոնին նստած անձը մտել է մարդկանց տներ՝ օրենքի կոպիտ խախտումներով: Տեսանյութում ՔՊ-ի այլանդակ քարոզչության մանրամասներն են. . .»

«. . .Հիմա ուզում եմ ասեմ հենց ՔՊ-ի հետ կապված. այդքան հրապարակումներ կան, թե ինչ այլանդակ բարքեր կան ձեր մեջ, բա մի հատ հրապարակենք էլի, թող ձայնագրություններ հրապարակեն, պահանջում ենք: Տեսեք՝ ինչ այլանդակ բարքեր են հրապարակվելու . . . »

https://www.facebook.com/reel/846582124599945

Հոկտեմբերի 23

«...ՔՊ-ն գործում է հստակ կեղծիքների հստակ սխեմայով, որոնք պարզաբանում եմ տեսանյութում: Նրանք ուղղակի քանդում են պետությունը, պառակտում մեր ժողովրդին, ավերում են Հայոց Եկեղեցին ու արժեքները:»

https://www.facebook.com/reel/775521165296404

Ընդ որում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արման Թաթոյանը հանդիսանում է նշյալ հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը և, հետևաբար, առանց լիազորագրի ներկայացնում է այն, նրա կողմից կատարված հայտարարությունները պետք է մեկնաբանվեն որպես իր ղեկավարած և իր կողմից ներկայացվող հիմնադրամի հայտարարություններ: Առավել ևս, Արման Թաթոյանի կողմից կատարված քաղաքական հրապարակումները հաճախ վերահրապարակվել են հենց հիմնադրամի պաշտոնական էջում, ինչպես ներկայացվեց վերևում:

Համաձայն ՀՀ ընտրական օրենսգրքի (այսուհետ՝ «Օրենսգիրք») 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝

Ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավունք ունեն՝ (...) Հայաստանի Հանրապետության այն հասարակական կազմակերպությունները և հիմնադրամները, որոնց կանոնադրական նպատակներն ընտրությունները նշանակելու օրվան նախորդող նվազագույնը մեկ տարի ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր, որոնց կառավարման մարմնի կազմում, բացառությամբ ժողովի, որևէ ներկայացուցիչ չի մասնակցում տվյալ ընտրություններին թեկնածուի կարգավիճակով, և <u>որոնք չեն աջակցում թեկնածուներին կամ ընտրություններին մասնակցող կուսակցություններին</u>:

Ինչպես պարզ է դառնում վերը բերված փաստերից, «ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱԹՈՅԱՆ» հիմնադրամը չի պահպանում

քաղաքական չեզոքության այս կանոնը, հետևաբար, չի կարող շարունակել իրականացնել դիտորդական առաքելությունը:

Օրենսգրքի 31-րդ հոդվածի 4.1-ին մասի համաձայն՝

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ուժը կորցրած է ճանաչում դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպության (համատեղ հանդես եկող դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների) հավատարմագրումը, եթե հավատարմագրվելուց հետո ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց առկայության պայմաններում հավատարմագրման վերաբերյալ դիմումը կմերժվեր: (...)

Սույն հոդվածի 1.1-ին մասում առկա հանգամանքները դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպության (համատեղ հանդես եկող դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների) հավատարմագրումից հետո ի հայտ գալու դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հավատարմագրված դիտորդների ցանկից հանում է որպես դիտորդ հանդես գալու իրավունք չունեցող անձանց վերաբերյալ տվյալները: (...)

Հաշվի առնելով ներկայացված փաստական հանգամանքները և հիմք ընդունելով Օրենսգրքի 31-րդ հոդվածի 4.1-ին մասով նախատեսված՝ Հանձնաժողովի լիազորությունները՝

խ ն դ ր ում ե ն ք

ուժը կորցրած ճանաչել Վաղարշապատի ընտրություններին դիտորդական առաքելություն իրականացնող «ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱԹՈՅԱՆ» հիմնադրամի հավատարմագրումը:

Կից ներկայացվում են՝

1. «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի անդամ կազմակերպությունների ղեկավարների կողմից տրված լիազորագրերը.
2. «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի անդամ կազմակերպությունների պետական գրանցման վկայականների պատճենները.
3. ԱՀՓ պատճենը:

«Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի
(անդամ կազմակերպությունների) լիազոր ներկայացուցիչ՝

ՀՀ քաղաքացի, «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ ծրագրերի համակարգող **Դանիել Իոաննիսյան**